Անցկացվեց Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի հերթական նիստը

Հոկտեմբերի 29-ին տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի 2015 թվականի հերթական նիստը՝ կոմիտեի անդամների մասնակցությամբ: Նիստը վարում էր Գեղարքունիքի մարզպետ, ներքին աուդիտի կոմիտեի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը: Նիստի ընթացքում քննարկվեց <<Սևանի հիվանդանոց>> ՓԲԸ-ում անցկացված ներքին աուդիտի արդյունքները: Քննարկվեցին աուդիտի ընթացքում նշված կազմակերպություններում բացահայտված ֆինանսատնտեսական և այլ բնույթի մի շարք բացթողումներ և խախտումներ: Կատարված խախտումների համար ւնկերության տնօրենը և գլխավոր հաշվապահը ենթարկվեցին կարգապահական տույժերի: Ընկերությանը հանձնարարվեց սեղմ ժամկետում վերացնել ներքին աուդիտի ընթացքում արձանագրված խախտումներն ու թերությունները և դրանց վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան: